22.09.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
սեպտեմբերի 22 -ի N 1549 - Լ որոշման

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. Միջոցառման նպատակն է Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերում և վարկային կազմակերպություններում (այսուհետ՝ բանկեր և վարկային կազմակերպություններ) գործող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման միջոցով օժանդակել կորոնավիրուսի տարածման հետևանքով տուժած զբոսաշրջության ոլորտը սպասարկող տրանսպորտային ընկերությունների վարկային պարտավորությունների կատարմանը՝ ստեղծված իրավիճակում վերջիններիս գործունեության շարունակականությունն ապահովելու, ինչպես նաև զարգացման նպատակով ձեռքբերված վարկի դիմաց գրավի առարկա հանդիսացող գույքը պաշտպանելու նպատակով:

2. Միջոցառման շահառու հանդիսանում են զբոսաշրջության ոլորտը սպասարկող, տնտեսական գործունեության H49.3, H49.42 և N79 դասակարգիչները հայտարարագրած տրանսպորտային ոլորտի՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ չհանդիսացող այն իրավաբանական անձինք կամ հաշվառված անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ տնտեսավարողներ), որոնք ունեն Հայաստանի Հանրապետության տարածքում պետական գրանցում, ստեղծվել են մինչև 2019 թվականի հունվարի 1-ը և ապահովում են ստորև թվարկված բոլոր չափանիշներին համապատասխանությունը՝

1) կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 23-րդ միջոցառման շրջանակում չեն ներկայացրել աջակցություն ստանալու դիմում 2020 թվականի օգոստոս ամսվանից սկսած.

2) 2019 թվականի իրացման շրջանառության առնվազն 50 տոկոսը ձևավորվել է հետևյալ պատվիրատուների անկանխիկ վճարումների արդյունքում՝

ա) զբոսաշրջային գործակալություններ և օպերատորներ, տեղերի ամրագրում և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայություններ մատուցող տնտեսավարողներ (ՏԳՏԴ՝ N 79).

բ) կացության կազմակերպում իրականացնող տնտեսավարողներ (ՏԳՏԴ՝ I 55).

գ) օտարերկրյա բանկային հաշվից վճարում իրականացրած քաղաքացիներ կամ կազմակերպություններ.

3) ունեցել են բարվոք վարկային պատմություն, այսինքն՝ ըստ ԱՔՌԱ տեղեկատվության՝ 2019 թվականի ընթացքում չեն ունեցել 30 օր և ավելի ժամկետով ժամկետանց վարկային պարտավորություններ.

4) ներկայացրել են բանկի կամ վարկային կազմակերպության կողմից տրված գրավոր հաստատումն այն մասին, որ վարկը տրամադրվել է մինչև 2020 թվականի մարտի 31-ը ներառյալ՝ տրանսպորտային միջոց ձեռք բերելու նպատակով.

5) ներկայացրել են բանկի կամ վարկային կազմակերպության կողմից տրված գրավոր հաստատումն այն մասին, որ աջակցության շահառու ճանաչվելու դեպքում վարկի մայր գումարի մարումները կհետաձգվեն առնվազն մինչև 2021 թվականի ապրիլ ամիսը.

3. Սույն հավելվածի 2-րդ կետով նշված դասակարգիչները չհայտարարագրած, սակայն 2019 թվականի ընթացքում փաստացի նշված ոլորտներում գործունեություն իրականացրած տնտեսավարողները կարող են ընդգրկվել միջոցառման շահառուների ցանկում հարկային մարմնի տեղեկատվական բազայում արտացոլված տվյալների (հաշվարկային փաստաթղթերի և աշխատողների) ուսումնասիրության արդյունքում: Տվյալ դեպքում՝ տնտեսավարողը գրավոր դիմում է ներկայացնում ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, որը որոշում է կայացնում տնտեսավարողի տնտեսական գործունեության տեսակի մասին՝ հարկային մարմնի հետ ուսումնասիրության արդյունքներով:

4. Միջոցառման շրջանակում օժանդակությունը տրամադրվում է յուրաքանչյուր եռամսյակի ընթացքում ըստ ժամանակացույցի՝ վարկի դիմաց վճարման ենթակա տոկոսների 75 տոկոսի փոխհատուցման ձևով: Ընդ որում՝ փոխհատուցումը տրվում է յուրաքանչյուր եռամսյակի համար:

5. Սույն միջոցառման շրջանակում փոխհատուցումը տրամադրվում է մինչև 2021 թվականի մարտ ամիսը ներառյալ:

6. Տնտեսավարողը դադարում է համարվել սույն միջոցառման շահառու, եթե՝

1) ըստ համապատասխան ժամանակացույցի չի իրականացրել միջոցառման շրջանակում մեկ կամ մի քանի սուբսիդավորվող վարկերի տոկոսների վճարման պարտավորության իր մասը.

2) մշտադիտարկման արդյունքում պարզվել են միջոցառման պահանջների վերաբերյալ ոչ հավաստի տվյալների ներկայացման փաստեր.

3) ՀՀ էկոնոմիկայի նախարարության և բանկերի կամ վարկային կազմակերպությունների հետ կնքված պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

7. Սույն միջոցառման 6-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում տնտեսավարողը կրում է մինչ այդ միջոցառման շրջանակներում պետության կողմից բանկին կամ վարկային կազմակերպությանը փաստացի փոխանցված դրամական միջոցները և դրանց նկատմամբ հաշվարկված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափով տոկոսները վերադարձնելու պարտականություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ